ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

15 փետրվարի 2017 թվականի N 18-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 40-րդ, 41-րդ հոդվածներով, 42-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով, հիմք ընդունելով ՀՀ բնապահպանության նախարարության 2017 թվականի փետրվարի 07-ի թիվ 10 փորձաքննական եզրակացությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ՕԲՍԻԴԻԱՆ ՍԹՈՆ» ՍՊ ընկերությանը՝ մեկ տարի վեց ամիս ժամկետով տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թիվ ԵՀԹ-29/235 թույլտվությունը, ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավանի օբսիդիանի երևակման <Վանակատ> տեղամասում, հետևյալ կոորդինատներով՝ 1.X=4467530 Y=8390528 2.X=4467506 Y=8390492 3.X=4467368 Y=8390536 4.X=4467305 Y=8390663 5.X=4467299 Y=8390732 6.X=4467349 Y=8390840 7.X=4467540 Y=8390758 8.X=4467514 Y=8390693 9.X=4467531 Y=8390599 (տրված է ARM WGS-84 համակարգով) սահմանափակված 5.8 հա տարածքում՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ կատարելու համար:

2. Աշխատակազմի ընդերքի գործակալության պետին՝

1) 2 օրվա ընթացքում նախապատրաստել սույն հրամանի 1-ին կետում նշված ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավանի օբսիդիանի երևակման <Վանակատ> տեղամասում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության ընդերքօգտագործման պայմանագիրը և ծանուցել ընկերությանը՝ սույն հրամանը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում պայմանագիրն իր կողմից վավերացնելու մասին,

2) ընկերության կողմից պայմանագիրը վավերացնելուց հետո, 10 օրվա ընթացքում, ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքի վճարման անդորրագրի ներկայացումից անմիջապես հետո, ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության իրավունքը հավաստող փաստաթղթերի (թույլտվություն, պայմանագիր, լիազոր մարմնի հետ համաձայնեցված աշխատանքային ծրագիր) փաթեթը,

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած,

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումը երկրաբանական ուսումնասիրությունների իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3. «<Հանրապետական երկրաբանական ֆոնդ> ՊՈԱԿ-ի տնօրենին՝ ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով կամ վարչական դատարան ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ